Տնային Աջակցության Ծառայություններ (IHSS) Էլեկտրոնային Այցի Հաստատման (EVV) Տեղորոշման Ծառայություններ

Հաճախակի տրվող հարցեր

Փոփոխություններ Էլեկտրոնային Այցի Հաստատման (EVV) համակարգում

Կալիֆորնիայի Սոցիալական Ծառայությունների Բաժինը (CDSS) հրահանգներ է ստացել դաշնային կառավարությունից, որը տեղեկացնում է CDSS-ին, որ 2023 թվականի հուլիսի 1-ից բոլոր համատեղ չբնակվող IHSS/WPCS մատակարարներից պահանջվելու է 'մուտք գործել' յուրաքանչյուր աշխատանքային օրվա սկզբում և 'ելք կատարել' յուրաքանչյուր աշխատանքային օրվա վերջում և պարզել, թե արդյոք ծառայությունները սկսվում կամ ավարտվում են տանը, թե համայնքում:

Ինչ է սա նշանակում

Դաշնային օրենքին համապատասխանելու և դաշնային տույժերից խուսափելու համար 2023 թվականի հուլիսի 1-ից EVV համակարգերը թարմացվել են՝ համատեղ չբնակվող IHSS/WPCS մատակարարների գտնվելու վայրը ֆիքսելու համար, երբ նրանք ամեն օր մուտք են գործում և ելք են կատարում՝ «տուն» ընտրելիս:

Հիշելու հիմնական կետերը

- 2023 թվականի հուլիսի 1-ից IHSS/WPCS մատակարարները, ովքեր չեն ապրում իրենց ստացողի հետ, որոնք կոչվում են ոչ համատեղ բնակվող մատակարարներ, նրանցից կպահանջվի յուրաքանչյուր աշխատանքային օրվա սկզբում մուտք գործել և ելք կատարել յուրաքանչյուր աշխատանքային օրվա վերջում:

- Ստացողների համար ոչ մի փոփոխություն ՉԿԱ: Ստացողները դեռևս կվերանայեն և կհաստատեն կամ կմերժեն իրենց մատակարարի էլեկտրոնային ժամացուցակն՝ օգտվելով Էլեկտրոնային Ծառայությունների Պորտալից (ESP) կամ Հեռախոսային Ժամացուցակի Համակարգից (TTS), ինչպես անում են ներկայումս: Որևէ ազդեցություն չկա, թե ինչպես են ստացողների ծառայությունները լիազորված կամ ինչպես են նրանք ստանում այս ծառայությունները:

- ՈՉ մի փոփոխություն չկա այն մատակարարների համար, ովքեր ապրում են իրենց ստացողի հետ: Համատեղ ապրող մատակարարներից չի պահանջվում մուտք գործել և ելք կատարել, և նրանք կշարունակեն լրացնել և ներկայացնել իրենց IHSS էլեկտրոնային ժամացուցակներն առցանց՝ ESP-ի կամ TTS-ի միջոցով:

- Ոչ համատեղ ապրող մատակարարների գտնվելու վայրը/տեղանքը կամ շարժումները չեն արձանագրվում օրվա ընթացքում: Մատակարարի գտնվելու վայրը կգրանցվի միայն մուտք գործելու և ելք կատարելու ժամանակ, և երբ մատակարարն ընտրում է «Տուն»՝ հաստատելու համար, որ ստացողը ստանում է IHSS-ի կողմից լիազորված ծառայություններն իր տանը:

- Եթե ոչ համատեղ ապրող մատակարարն աշխատում է մի քանի ստացողների համար, նրանք պետք է մուտք գործեն և ելք կատարեն յուրաքանչյուր ստացողի համար: Մի քանի ստացողների համար ծառայություններ մատուցելիս մուտքի և ելքի ժամերի համընկնումը նորմալ է:
- Ոչ համատեղ ապրող մատակարարները կարող են հեշտությամբ մուտքագրել իրենց աշխատած ժամերն ու րոպեները ամեն օր, երբ նրանք ելք են կատարում, իրենց IHSS էլեկտրոնային ժամացուցակից՝ նախքան այն կներկայացնեն իրենց ստացողին հաստատման համար, ինչպես անում են ներկայումս:

- EVV համակարգը թույլ կտա մատակարարին ուղղել մուտքի և ելքի տեղեկատվության մեջ եղած սխալները՝ նախքան ժամացուցակը հաստատման ներկայացնելը:

- Մատակարարները դեռևս վճարվում են իրենց աշխատած ժամերի և րոպեների քանակի հիման վրա, այլ ոչ թե մուտք և ելք կատարելու միջև ընկած ժամանակահատվածի վրա:

Հաճախակի տրվող հարցեր.

***Հ. Ինչու՞ է հարկավոր փոխել EVV համակարգը:**
***Պ.** Դաշնային օրենքը պահանջում է, որ EVV համակարգերը էլեկտրոնային եղանակով գրանցեն IHSS/WPCS մատակարարների գտնվելու վայրը յուրաքանչյուր աշխատանքային օրվա սկզբում և վերջում՝ ապահովելու համար, որ ստացողները ծառայություններ են ստանում իրենց տանը: Կալիֆորնիան պետք է թարմացնի իր ներկայիս EVV համակարգը՝ համապատասխանելու համար, հակառակ դեպքում դաշնային կառավարությունը կշարունակի ֆինանսական պատժամիջոցներ կիրառել նահանգի նկատմամբ:

Հ. Ինչպե՞ս կարող եմ ես դա անել թղթե ժամացուցակի վրա:
Պ. 2020 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ էլեկտրոնային ժամացուցակի օգտագործումը IHSS մատակարարներին աշխատանքի պայմանն է հանդիսանում:

Հ. Արդյո՞ք կառավարությունը հետևում է մեզ:
Պ. Ոչ, ձեզ չեն հետևում: Աշխարհագրական դիրքը չի հավաքագրի ձեր տեղանքի տվյալներն օրվա ընթացքում և նաև այն դեպքում, երբ մատակարարը նշում է/ընտրում է տեղանքը որպես «համայնք»: Աշխարհագրական դիրքը կարձանագրվի միայն էլեկտրոնային եղանակով, երբ մուտք եք գործում յուրաքանչյուր աշխատանքային օրվա սկզբում և ելք եք կատարում յուրաքանչյուր աշխատանքային օրվա վերջում, երբ ընտրում եք «տուն» տարբերակը:

Հ. Ինչո՞ւ եք հիմա դա ձեռնարկում, այն բանից հետո, երբ մեզ ասացին, որ մեզ չեն հետևի Գլոբալ դիրքորոշման համակարգի (GPS) միջոցով:

Պ. Հիմնվելով IHSS-ի շահագրգիռ կողմերի արձագանքների վրա՝ GPS չօգտագործելու վերաբերյալ, Կալիֆորնիայի Սոցիալական Ծառայությունների Բաժինը (CDSS) ծրագիր է ներկայացրել Medicare/Medicaid ծառայությունների (CMS) դաշնային կենտրոններին, որը պահանջում է մատակարարներից իրենց գտնվելու վայրը մուտքագրել էլեկտրոնային համակարգ, այլ ոչ թե օգտագործել GPS: Այնուամենայնիվ, CMS-ն այժմ որոշել է, որ գործընթացը չի համապատասխանում դաշնային պահանջին, ըստ որի մատակարարի գտնվելու վայրը պետք է էլեկտրոնային եղանակով գրանցվի յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար մատուցվող ծառայությունների սկզբում և վերջում: Կալիֆորնիայից պահանջվում էր ֆինանսական տույժեր վճարել 2021 թվականի հունվարի 1-ից մինչև EVV համակարգը չհամապատասխանի դաշնային օրենքին:

Մուտք գործել և ելք կատարել (Check-in and Check-out)

Հ. Արդյո՞ք սա նշանակում է, որ մատակարարները պետք է մուտք գործեն և ելք կատարեն ամբողջ օրվա ընթացքում յուրաքանչյուր ծառայության համար, որը նրանք տրամադրում են ստացողին:
Պ. Ոչ, մատակարարները միայն պետք է մուտք գործեն և ելք կատարեն օրական մեկ անգամ յուրաքանչյուր ստացողի համար, ում հետ նրանք աշխատում են: Եթե մատակարարն աշխատում է ստացողի համար, ով ստանում է և՛ IHSS, և՛ WPCS, ապա մատակարարը պետք է մուտք գործի և ելք կատարի յուրաքանչյուր ծրագրի համար առանձին:

Հ. Ի՞նչ անել, եթե ես սխալ թույլ տամ:
Պ. Համակարգը թույլ կտա ուղղել ցանկացած սխալ: Մատակարարները դեռևս կկարողանան վերանայել և թարմացնել իրենց ժամացուցակները, նախքան ժամացուցակը կուղարկեն ստացողին հաստատման համար, ճիշտ այնպես, ինչպես դուք անում եք ներկայումս:

Հ. Ի՞նչ կպատահի, եթե մոռանամ կատարել մուտք գործելու և ելք կատարելու գործողությունը:
Պ. Որքան հնարավոր է շուտ կատարեք մուտքի և ելքի գործողությունը, երբ մտաբերեք, որ չեք կատարել այն: Դուք կկարողանաք թարմացնել տեղեկատվությունը, երբ լրացնեք ձեր ժամացուցակի գրառումը Էլեկտրոնային Ծառայությունների Պորտալում (ESP):

Հ. Արդյո՞ք ես պետք է վերադառնամ այն վայրը, եթե մոռացել եմ մուտք գործել և ելք կատարել:
Պ. Ոչ, դուք կարող եք թարմացնել մուտքի և դուրսգրման տեղեկատվությունը ESP-ում ժամացուցակի մուտքագրման էկրանին՝ «սկիզբ» և «ավարտ» ժամանակի սյունակներում:

Հ. Եթե ես արդեն ելք եմ կատարել տվյալ օրվա համար, բայց պետք է վերադառնամ ստացողի տուն՝ լրացուցիչ ծառայություններ մատուցելու համար, արդյո՞ք ես պետք է նորից մուտքի և ելքի գործողությունը կատարեմ:
Պ. Այո՛: Համակարգն ինքնին փոփոխություն կկատարի և ժամացուցակում կտեղադրվի ձեր առաջին անգամ մուտք գործելու և վերջին անգամ ելք կատարելու տվյալները: Դուք վճարվում եք ձեր մուտքագրած աշխատած ժամերի համար՝ այն ինչի համար վճարվում եք ներկայումս:

Հ. Ի՞նչ անել, եթե ես աշխատում եմ մի քանի ստացողների համար:
Պ. Ամեն օր ձեզանից կպահանջվի մուտք գործել և ելք կատարել յուրաքանչյուր ստացողի

համար, ում համար դուք աշխատում եք: Սկսելեու և ավարտի ժամերը կարող են համընկնել: Դուք պետք է ուշադիր լինեք և ճիշտ գրանցեք, թե օրական քանի ժամ եք աշխատում յուրաքանչյուր ստացողի համար, ինչպես անում եք ներկայումս: Դուք պետք է շարունակեք ժամացուցակ ներկայացնել յուրաքանչյուր ստացողի համար, ում համար աշխատում եք: Դուք կշարունակեք վճարվել աշխատած ժամերի և ոոպեների համար, այլ ոչ թե մուտքագրման և դուրսգրման միջև ընկած ժամանակահատվածի համար:

Հ. Ի՞նչ անել, եթե ես աշխատեմ տանը և համայնքում նույն օրը: Ինչպե՞ս կարող եմ մուտք գործել և ելք կատարել:
Պ. Դուք մուտք կգործեք օրվա առաջին ծառայության սկզբում, և ելք կկատարեք օրվա համար մատուցած վերջին ծառայության ավարտին: Դուք կընտրեք ձեր գտնվելու վայրը՝ «տուն» կամ «համայնք, կախված նրանից, թե որտեղ եք գտնվում ձեր աշխատանքային օրվա սկզբի և ավարտի ժամանակ: Ձեզ հարկավոր չէ գրանցվել յուրաքանչյուր ծառայության համար, ընդամենը մեկ անգամ սկզբում և մեկ անգամ աշխատանքային օրվա վերջում՝ յուրաքանչյուր ստացողի համար:

Հ. Ի՞նչ անեմ, եթե ես օգնության կարիք ունենամ:
Պ. CDSS-ը կապահովի, որ դուք վերապատրաստման/ուսումնական ռեսուրսներ ունենաք, որոնք անհրաժեշտ են այս փոփոխությունը կատարելու համար: Մենք կապահովենք, որ շատ ուսումնական նյութեր հասանելի լինեն առցանց և մենք ծրագրելու ենք առցանց վերապատրաստման դասընթացներ, ինչպես դա արեցինք EVV-ի իրականացման համար: Բացի այդ, դուք կարող եք զանգահարել IHSS-ի Աջակցության Բաժին հետևյալ հեռախոսահամարով՝ (866) 376-7066, երկուշաբթիից - ուրբաթ, առավոտյան ժամը 8:00-ից մինչև երեկոյան ժամը 5:00-ը, բացառությամբ տոն օրերի:

EVV բջջային հավելված (EVV Mobile App)

Հ. Արդյո՞ք EVV բջջային հավելվածը պարտադիր է:
Պ. Մատակարարներից չի պահանջվում օգտվել բջջային հավելվածից, այն կամընտիր է (պարտադիր չէ): EVV բջջային հավելվածը լրացուցիչ գործիք է, որը մատակարարները կարող են օգտագործել՝ մուտքը/ելքը հեշտացնելու համար:

Հ. Կարո՞ղ եմ իմ ժամացուցակները ներկայացնել EVV բջջային հավելվածի միջոցով:
Պ. Ոչ: Մատակարարներն իրենց ժամացուցակները կներկայացնեն էլեկտրոնային եղանակով, ինչպես դա անում են ներկայումս՝ Էլեկտրոնային Ծառայությունների Պորտալի (ESP) և/կամ Հեռախոսային Ժամանակացույցի Համակարգի (TTS) միջոցով:

Հ. Կարո՞ղ եմ մուտք գործել EVV բջջային հավելվածի միջոցով և ելք կատարել ESP-ի կամ TTS-ի միջոցով:
Պ. Այո:

Հ. Ո՞րն է EVV Բջջային հավելվածի առավելությունը:
Պ. Հավելվածը հեշտությամբ հասանելի է, և այն կարող է հեշտությամբ կատարել մուտք գործելու/ելք կատարելու գործողությունը և ավտոմատ կերպով լրացնել ժամերը ձեր էլեկտրոնային ժամացուցակում, և դուք կարող եք ընտրել գտնվելու վայրը (տուն կամ համայնք):

Հ. Արդյո՞ք տվյալները (data) պետք է «միացված» լինեն բջջային հավելվածից օգտվելու համար: Այլ կերպ ասած, արդյո՞ք անհրաժեշտ է ինտերնետ հասանելիություն:
Պ. Ձեզ անհրաժեշտ կլինի ինտերնետ հասանելիություն՝ ձեր բջջային սարքում EVV բջջային հավելվածը ներբեռնելու համար: Հավելվածը ներբեռնելուց հետո հավելվածն օգտագործելու համար ձեզ հարկավոր չէ ինտերնետ կապ: Համացանցին միանալուց հետո մուտքի/ելքի տեղեկատվությունը կպահվի և կթարմացվի:

Հ. Արդյո՞ք EVV բջջային հավելվածը հասանելի կլինի այլ լեզուներով: Ի՞նչ լեզուներով են հասանելի:
Պ. EVV բջջային հավելվածը հասանելի կլինի չորս լեզուներով՝ անգլերեն, հայերեն, իսպաներեն և չինարեն: EVV բջջային հավելվածն անվճար է:

Հ. Արդյո՞ք պարտադիր է EVV բջջային հավելվածում մուտքագրել իմ աշխատած ժամերը: Արդյո՞ք ես հիմա պետք է ամեն օր մուտքագրեմ ժամերը:
Պ. Ոչ: Ամեն օր մուտքի/ելքի ժամանակ պարտադիր չէ մուտքագրել ձեր աշխատած ժամերը: Այս տարբերակը հասանելի է այն մատակարարների համար, ովքեր աշխատանքային շաբաթվա ավարտին սպասելու փոխարեն նախընտրում են լրացնել իրենց ժամերն այդ պահին: Ցանկության դեպքում, դուք կարող եք մուտքագրել ձեր մուտքի/ելքի գրառումներն ավելի ուշ, երբ լրացնեք ձեր ժամացուցակը:

Հ. Ե՞րբ EVV բջջային հավելվածը հասանելի կլինի ներբեռնելու համար:
Պ. Նոր, անվճար EVV բջջային հավելվածը կարելի է ներբեռնել 2023 թվականի հուլիսի 1-ին:

Հ. Կարո՞ղ եմ ավելի շուտ ներբեռնել EVV բջջային հավելվածը:
Պ. Ոչ: EVV բջջային հավելվածը հասանելի կլինի հավելվածների խանութներում (app stores) 2023 թվականի հուլիսի 1-ից: Հավելվածների խանութը թույլ չի տա ներբեռնել EVV բջջային հավելվածը մինչև այն գործարկվի 2023 թվականի հուլիսի 1-ին:

Հ. Արդյո՞ք մենք ստիպված կլինենք շարունակել փոխել մեր գաղտնաբառն, ինչպես պահանջում է ներկայիս գործող համակարգը:
Պ. Քանի որ դուք օգտագործում եք նույն ESP օգտանունը և գաղտնաբառը EVV բջջային հավելված մուտք գործելու համար, ձեր գաղտնաբառի փոփոխման գործընթացը կմնա նույնը: Երբ թարմացնեք ձեր ESP գաղտնաբառը, այն կթարմացվի նաև EVV բջջային հավելվածում:

Հ. Արդյո՞ք EVV բջջային հավելվածը պահանջում է, որ մուտքագրվեք ամեն անգամ, երբ մուտք եք գործում և ելք կատարում:
Պ. Կախված ձեր սարքի տվյալների/հիշողության ծավալի, հնարավոր է, որ դուք ամեն անգամ կատարեք մուտքագրում՝ մուտք/ելք կատարելու համար:

Հ. Որքա՞ն ժամանակ է պահանջվում, որպեսզի EVV բջջային հավելվածի գրառումները թարմացվեն ձեր ESP ժամացուցակում:
Պ. Սովորաբար ընդամենը մի քանի րոպե է տևում EVV բջջային հավելվածի տեղեկատվությունը ձեր ժամացուցակում թարմացնելու համար:

Տուն կամ Համայնք

Հ. Արդյո՞ք մուտք եմ գործում/ելք կատարում «տանից» թե «համայնքից», երբ ես սկսում կամ ավարտում եմ IHSS ծառայությունները ստացողի համար իմ (մատակարարի) տանը:
Պ. Կանոնակարգերը պահանջում են, որ IHSS-ի ծառայությունը լրացվի ստացողի տանը: Ծառայությունները, որոնք կարող են տեղի ունենալ «համայնքում», ներառում են գնումներ, հանձնարարություններ, դեղորայք ստանալ, լվացք կամ բժշկական ուղեկցությունը---բոլոր մյուս IHSS ծառայությունները **պետք է** մատուցվեն ստացողի տանը, կամ եթե դուք ապրում եք նույն տանն, ինքնաբերաբար ծառայությունը կմատուցվի նույն հարկի տակ: Ձեր IHSS աշխատանքային օրը սկսվում է այն պահից, երբ դուք սկսում եք կատարել առաջին ծառայությունը և չի ներառում ճանապարհի վրա ծախսած ժամանակը:

Հ. Ի՞սկ եթե ես ամեն օր սկսեմ համայնքում:
Պ. Կանոնակարգերը պահանջում են, որ IHSS-ի ծառայությունը լրացվի ստացողի տանը կամ, եթե դուք ապրում եք նույն տանն, ապա IHSS ծառայությունների մեծ մասը կկատարվի ստացողի տանը: Միակ IHSS ծառայությունները, որոնք կարող են «համայնք» համարվել՝ գնումներն են, հանձնարարությունները, բժշկական ուղեկցությունը, և որոշ դեպքերում լվացքը կարող է թույլատրվել:

Ոչ համատեղ բնակվող IHSS մատակարարները չեն կարող մուտքի գործողությունը կատարել նախքան ստացողի տուն հասնելը, բացառությամբ այն դեպքի, եթե կատարում են որոշակի IHSS ծառայություններ մինչև ստացողի տուն գնալը, և չեն վճարվի ճանապարհի վրա ծախսած ժամանակահատվածի համար: Եթե շարունակաբար մուտքը գործելը և ելք կատարելը նշվի «համայնք», ապա կարող է կասկածելի թվալ և լրացուցիչ հետաքննություն նշանակվի:

Հ. Ի՞նչ կլինի, եթե ես ցերեկը խնամեմ ստացողին իմ տանը, իսկ գիշերը տանեմ իր տուն:
Պ. IHSS կանոնակարգերը պահանջում են, որ ծառայությունները պետք է կատարվեն ստացողի տանը: Միակ ծառայությունները, որոնք կարող են մատուցվել «համայնքում»՝ մթերային գնումներն են, հանձնարարությունները, դեղորայք ստանալը, լվացք կամ բժշկական ուղեկցությունը, մնացած բոլոր IHSS ծառայությունները պետք է իրականացվեն ստացողի տանը: Եթե կան հանգամանքներ, երբ անձնական խնամքի ծառայությունները տրամադրվում են ստացողի տնից դուրս՝ այլ վայրում, ապա մատակարարները պետք է դիմեն/տեղեկացնեն իրենց սոցիալական աշխատակցին վարչաշրջանի IHSS գրասենյակում:

Ճանապարհորդություն

Հ. Ի՞նչ կպատահի, եթե ես իմ ստացողի հետ ճանապարհորդեմ երկրից դուրս... Ինչպե՞ս կարող եմ մուտք գործել և ելք կատարել:
Պ. Ինչպես գործում է ներկայումս, IHSS ծառայություններ ստանալու համար՝ ստացողները պետք է լինեն Կալիֆորնիայի նահանգում ապրող մշտական բնակիչներ: Ստացողները, երբ ծրագրում են մեկնել Միացյալ Նահանգներից դուրս, պետք է տեղեկացնեն այդ մասին իրենց վարչաշրջանի IHSS սոցիալական աշխատակցին: Միացյալ Նահանգներից դուրս գտնվելու ժամանակ IHSS-ի ծառայություններ կարող է տրամադրվել միայն վարչաշրջանի հաստատմամբ՝ համաձայն երկրից դուրս

ճանապարհորդության կանոնների, որոնք սահմանված են Քաղաքականության և ընթացակարգերի ձեռնարկում (MPP) 30-770.46-.46(b):

Հ. Ի՞նչ տեղի կունենա, եթե ես իմ ստացողի հետ ճանապարհորդեմ Կալիֆորնիայի նահանգից դուրս:
Պ. Ինչպես գործում է ներկայումս, IHSS ծառայություններ ստանալու համար՝ ստացողները պետք է լինեն Կալիֆորնիայի նահանգում ապրող մշտական բնակիչներ: Ստացողներից պահանջվում է կապ հաստատել վարչաշրջանի IHSS գրասենյակի իրենց սոցիալական աշխատակցի հետ, երբ նրանք ծրագրում են մեկնել նահանգից դուրս: Եթե մատակարարը ժամանակավորապես ճանապարհորդում է ստացողի հետ և նախատեսում է IHSS ծառայություններ տրամադրել ստացողի համար ճանապարհորդության ընթացքում, ապա ստացողը պետք է կապ հաստատի իր սոցիալական աշխատակցի հետ վարչաշրջանի IHSS գրասենյակում և տեղեկացնի նրան ճամփորդական ծրագրերի մասին: Կանոնակարգերը, որոնք վերաբերում են IHSS-ին, երբ ժամանակավորապես գտնվում են Կալիֆորնիայի նահանգից դուրս, ներկայացված են Քաղաքականության և ընթացակարգերի ձեռնարկում (MPP) 30-770.4-.444:

Հ. Ի՞նչ տեղի կունենա, եթե ես (մատակարար կամ ստացող) տեղափոխվեմ ժամանակավորապես/մշտապես Կալիֆորնիայից դուրս:
Պ. Դուք պետք է անհապաղ տեղեկացնեք ձեր վարչաշրջանի IHSS գրասենյակին: IHSS չի կարող տրամադրվել Կալիֆորնիայի նահանգից դուրս:

Հ. Ի՞նչ կպատահի, եթե ես ստացողի հետ ճանապարհորդեմ տարածքից դուրս և չկարողանամ զանգահարել ստացողի քաղաքային հեռախոսից TTS՝ մուտք/ելք կատարելու համար:
Պ. Տարածքից դուրս բոլոր ճանապարհորդությունները պետք է հաստատվեն ձեր սոցիալական աշխատակցի կողմից՝ վարչաշրջանի IHSS գրասենյակում: EVV բջջային հավելվածը և ESP-ին կարող են օգտագործվել միայն IHSS նպատակներով ստացողի հետ ճանապարհորդելիս, եթե IHSS վարչաշրջանի գրասենյակի ձեր սոցիալական աշխատակիցը նախապես հաստատել է ուղևորությունը: Եթե դուք օգտվում եք TTS-ից և չեք կարող օգտագործել ստացողի քաղաքային հեռախոսը, ապա կարող եք օգտվել EVV բջջային հավելվածից, ESP-ից կամ զանգահարել TTS և ընտրել «համայնք» հաստատված IHSS ծառայությունների համար, որոնք մատուցվում են ստացողի տնից դուրս:

Հ. Կարո՞ղ են արդյոք մատակարարներն օգտագործել EVV բջջային հավելվածը կամ ESP-ին՝ տարածքից դուրս մուտքի կամ ելքի գործողությունը կատարելու համար:
Պ. Տարածքից դուրս բոլոր ճանապարհորդությունները պետք է հաստատվեն վարչաշրջանի IHSS գրասենյակի կողմից: EVV բջջային հավելվածը և ESP-ին կարող են օգտագործվել միայն IHSS նպատակներով ստացողի հետ ճանապարհորդելիս, եթե IHSS վարչաշրջանի ձեր սոցիալական աշխատակիցը նախապես հաստատել է ուղևորությունը: Մատակարարները պետք է ընտրեն «համայնք» մուտքի կամ ելքի ժամանակ, երբ IHSS ծառայությունները տրամադրում են ստացողի տնից դուրս՝ օգտագործելով EVV բջջային հավելվածը, ESP կամ TTS:

Տեղանք/ Գտնվելու վայրը

Հ. Կարո՞ղ եմ իմ օրը սկսել «համայնքում» և ելք կատարել «տնից»:
Պ. Այո:

Հ. Եթե ես կանգ առեմ մթերային խանութում, նախքան ստացողի տուն գնալու ճանապահին, դա «տո՞ւն» է, թե՞ «համայնք»:
Պ. Համայնք:

Հ. Ինչո՞ւ կան միայն «տուն» կամ «համայնք» տարբերակները, և այլևս չկա «երկուսն էլ» տարբերակը:
Պ. Քանի որ մուտք գործելիս/ելք կատարելիս ֆիքսվում է ձեր աշխարհագրական դիրքը իրական ժամանակում, ապա դուք չեք կարող միաժամանակ լինել տանը և համայնքում:

Հ. Ես պետք է մուտք գործելուց տեղանքը նշեմ «տուն» թե՞ «համայնք», երբ ես իմ տանը ծառայություններ եմ սկսում ստացողի համար:
Պ. Կանոնակարգերը պահանջում են, որպեսզի IHSS ծառայությունը լրացվի ստացողի տանը: Ծառայությունները, որոնք կարող են տեղի ունենալ համայնքում, ներառում են գնումներ, հանձնարարություններ, դեղորայք ստանալ, լվացք կամ բժշկական ուղեկցությունը---բոլոր մյուս IHSS ծառայությունները **պետք է** իրականացվեն ստացողի տանը: Խնդրում ենք հիշել, որ ձեր IHSS աշխատանքային օրը սկսվում է այն պահից, երբ դուք սկսում եք կատարել առաջին ծառայությունը և չի ներառում ճանապարհի վրա ծախսած ժամանակը:

Ես համարվում եմ համատեղ ապրող մատակարար, թե՞ ոչ համատեղ ապրող մատակարար:

Հ. Ես մատակարար եմ, ով ապրում է նույն տանը, որտեղ ապրում է ստացող(ներ)ը, ում համար ես աշխատում եմ: Արդյո՞ք ես համարվում եմ համատեղ ապրող մատակարար:
Պ. EVV-ի փոփոխությունները, որոնք ուժի մեջ են մտնում 2023 թվականի հուլիսի 1-ից, չեն ազդում IHSS/WPCS համատեղ ապրող մատակարարների վրա: Յուրաքանչյուր վճարման ժամանակահատվածի սկզբում մատակարարներին հարցնում են, թե արդյոք նրանք ապրում են այն ստացողի հետ, ում համար աշխատում են, և նրանք կարող են համապատասխան ընտրություն կատարել, կամ այն մատակարարները, ովքեր համատեղ ապրում են ստացող(ներ)ի հետ և միևնույն ժամանակ աշխատում նրա/նրանց համար, կարող են լրացնել և ներկայացնել 'Live-in Provider Self-Certification'(SOC 2298) ձևը, որը տեղադրված է CDSS-ի կայքէջում՝ https://www.cdss.ca.gov/inforesources/ihss/live-in-provider-self-certification; կամ մուտք գործեք ձեր Էլեկտրոնային Ծառայությունների Պորտալի (ESP) հաշիվ և ընտրեք. Ֆինանսներ >> Համատեղ ապրող մատակարար >> Համատեղ ապրող մատակարարի վկայագիր:

Հ. Ես լրացրել եմ SOC 2298 ձևը, բայց այլևս չեմ ապրում այն ստացողի հետ, ում համար աշխատում եմ: Ի՞նչ պետք է անեմ:
Պ. Դուք կարող եք լրացնել հետևյալ չեղարկման ձևը՝ 'Live-in Provider Self-Certification Cancellation'(SOC 2299): Լրացուցիչ տեղեկատվության համար այցելեք CDSS-ի կայքէջը՝ https://www.cdss.ca.gov/inforesources/ihss/live-in-provider-self-certification:

Դուք կարող եք նաև չեղարկել ձեր կարգավիճակը Էլեկտրոնային Ծառայությունների Պորտալի (ESP) ձեր հաշվից և ընտրել. Ֆինանսներ >> Համատեղ ապրող մատակարար >> Համատեղ ապրող մատակարարի վկայագրի *չեղարկում* :

Հ. Որտե՞ղ կարող եմ տեղեկություններ գտնել Live-In Provider Self-Certification-ի մասին:
Պ. Համատեղ ապրող մատակարարի վերաբերյալ տեղեկատվությունը ներառված է 'Live-in Provider Self-Certification' (SOC 2298) ձևում, որը հասանելի է հետևյալ կայքէջում՝ https://www.cdss.ca.gov/inforesources/ihss/live-in-provider-self-certification:

Հ. Ես ստացող եմ: Մատակարարը շաբաթվա ընթացքում մի քանի գիշեր անցկացնում է իմ տանը: Արդյո՞ք այս մատակարարը համարվում է համատեղ ապրող մատակարար:
Պ. Ոչ:

Հ. Ես և ստացողը միասին ենք ապրում, բայց մենք շարունակում ենք ծանուցումներ ստանալ EVV փոփոխության վերաբերյալ, կարծես մենք միասին չենք ապրում:
Պ. Եթե ձեր գրառումներում չկա 'Live-in Provider Self-Certification'(SOC 2298) ձևը, ապա դուք կշարունակեք ստանալ այդ ծանուցումները: Յուրաքանչյուր վճարման ժամանակահատվածի սկզբում դուք կարող եք ինքնուրույն հաստատել, որ ապրում եք ստացողի հետ և այլևս չեք ստանա EVV փոփոխության տեղեկատվությունները ոչ համատեղ բնակվող մատակարարների վերաբերյալ: Լրացուցիչ տեղեկատվության համար այցելեք՝ https://www.cdss.ca.gov/inforesources/ihss/live-in-provider-self-certification:

Լրացուցիչ ռեսուրսներ/տեղեկատվություն

1. 'EVV Location Services Provider Training' դասընթացի (webinar) հղունը տեղադրված է հետևյալ կայքում՝ https://www.cdss.ca.gov/inforesources/ihss/ihss-providers/resources/evv-training: Ուսուցողական վեբինարները կշարունակվեն ողջ տարվա ընթացքում, և գրաֆիկը պարբերաբար կթարմացվի:
2. IHSS ժամացուցակի ստորագրության թույլտվության պահանջի մասին տեղեկություններ և հրահանգներ ACL-19-115
3. EVV մուտք գործելու և ելք կատարելու, Էլեկտրոնային Ծառայությունների Պորտալի կայքէջի կամ IHSS-ի Հեռախոսային Ժամացուցակի Համակարգի հետ կապված օգնության համար՝ խնդրում ենք զանգահարել IHSS-ի Աջակցության Բաժին հետևյալ հեռախոսահամարով՝ (866) 376-7066, երկուշաբթիից - ուրբաթ առավոտյան 8:00-ից մինչև երեկոյան ժամը 5-ը, բացառությամբ տոն օրերի:
4. Էլեկտրոնային Ծառայությունների Պորտալի կայքէջ՝ www.etimesheets.ihss.ca.gov
5. Հեռախոսային Ժամացուցակի Համակարգ՝ (833) DIAL-EVV կամ (833) 342-5388
6. IHSS EVV էլեկտրոնային փոստի հասցեն՝ EVV@DSS.ca.gov

*Հ = Հարց (Question)
*Պ = Պատասխան (Answer) Մայիս 16, 2023